Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2025 թ. սեպտեմբերի -ի
-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը **վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման դեպքով պայմանավորված**՝ անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

2. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐՅԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1) Բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության կամ քաղաքաշինության բնագավառում կամ մասնագիտական առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ
3) հաշվետվությունների և այլ փաստաթղթերի հետ աշխատելու փորձ.
4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներին:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

ա) Յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրերի մասով իրականացնել համայնքի և կապալառու կազմակերպության միջև կնքված պայմանագրերի հավաքագրում և մշտադիտարկում:

բ) Կնքված պայմանագրերի մշտադիտարկման և հավաքագրված տվյալների վրա ստեղծել տեղեկատվական բազա՝ կապալառու կազմակերպության տվյալներ, պայմանգրերի

կնքման ամսաթվի և պայմանագրով սահմանված աշխատանքները կատարողական ժամկետների ինչպես նաև տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության վերաբերյալ և ներկայացնել անմիջական ղեկավարին:
գ) Իրականացնել սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության այցելություններ յուրաքանչյուր ամիս 2 անգամ յուրաքանչյուր ծրագրի համար:
դ) Բոլոր ծրագրերի ընթացքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն և լուսանկարներ ներկայացնել անմիջական ղեկավարին ամիսը 2 անգամ:

ե) Ներառել սուբվենցիոն ծրագրերով շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի կազմում և սահմանված կարգով մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

զ) Ծրագրերի ավարտից հետո իրականացնել շահագործման հանձնված օբյեկտների ձեռք բերված մեքենամեխանիզմների, տեխնիկայի և գույքի կիրառման օգտագործման մշտադիտարկման ու որակային արդյունավետության մասով այցելություններ ծրագրերի ավարտից հետո առաջին տարվա ընթացքում:
է) Այցելության արդյունքներով գնահատված արդյունավետության կամ անարդյունավետության, ինչպես նաև շահագործման ընթացքում բացահայտվող թերությունների առկայության մասին եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համապատասխան համայնքի ղեկավարին և անմիջական ղեկավարին:
2) Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. **Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ**

Փորձագետը երեք ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

6. **Աշխատանքի գնահատման չափանիշներ**

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:
Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:
Գնահատման համար չափանիշերը սահմանվում են ըստ 4-րդ բաժնի 1-ին կետով սահմանված արդյունքների: Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշերն են՝
ա) Յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրերի մասով համայնքի և կապալառու կազմակերպության միջև կնքված պայմանագրերը հավաքագրված են և մշտադիտարկում իրականացված է:
բ) Կնքված պայմանագրերի մշտադիտարկման և հավաքագրված տվյալների վրա տեղեկատվական բազա ստեղծված է և ներկայացված է անմիջական ղեկավարին:

գ) Սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրությունը իրականացված է, ամիսը 2 անգամ յուրաքանչյուր ծրագրի համար այցելությունները կատարված են:
դ) Ծրագրերի ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը և լուսանկարները սահմանված ժամկետներում անմիջական ղեկավարին ներկայացված են:
ե) Սուբվենցիոն ծրագրերով շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի կազմում թեկնածությունը ներառվել է և սահմանված կարգով մասնակցել է հանձնաժողովի աշխատանքներին:
զ) Ծրագրերի ավարտից հետո շահագործման հանձնված օբյեկտների ձեռք բերված մեքենամեխանիզմների, տեխնիկայի և գույքի կիրառման օգտագործման մշտադիտարկման ու որակային արդյունավետության մասով այցելությունները սահմանված ժամկետներում իրականացված են:
է) Այցելության արդյունքներով գնահատված արդյունավետության կամ անարդյունավետության, ինչպես նաև շահագործման ընթացքում բացահայտված թերությունների առկայության մասին եռօրյա ժամկետում տեղեկատվությունը համապատասխան համայնքի ղեկավարին և անմիջական ղեկավարին ներկայացված է:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-09-17 16:04:33 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ